

Կարապետ Հակոբյան

ՎԱՐՉԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ 1878-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վճռորոշ բառեր – Կարսի մարզ, «Ժամանակավոր վերաբնակիչներ», արևմտահայ գաղթականներ, քաղաքական շահեր, մալականներ, մահմեդականներ, ռուսական իշխանություն:

1877թ. նոյեմբերի 6-ին ռուսական զորքերը հայազգի գեներալ Յովիաննես Լազարի գլխավորությամբ գրավեցին 30 հազարանոց կայազոր և 300 հրանոթ ունեցող, օտարերկրյա ռազմական մասնագետների կողմից ամուր պաշտպանություն կազմակերպած Կարսի անարիկ ամրոցը, որի գրավումը կարևոր նշանակություն ունեցավ ինչպես Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի առաջխաղացման, այնպես էլ՝ պատերազմի հետագա ընթացքի համար:

Ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսի միջնաբերդը նորից վերակառուցվում է: Կարսագետի գույգ բարձրադիր ափերին հիմնվում են նոր ամրություններ, որոնք միացվեցին կամուրջներով ու ճանապարհներով:

1877–1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանին անցած Կարսի սանծակից, Չլդրի սանծակի մեծ մասից և Բասենի սանծակի մի փոքր մասից ստեղծվեց վարչա-քաղաքական մի միավոր՝ Կարսի մարզ անվանումով: Մարզի մեջ մտան Կարսի, Արդահանի, Զարուշադի, Չլդրի, Շորագյալի, Կաղզվանի, Օլթի, Թախթի և Խորասանի շրջանները: Մարզային կենտրոնն էր Կարս քաղաքը: Մարզի ընդհանուր տարածքը կազմում էր 16.473 քառ. վերստ (18.646 քառ. կմ)¹:

Տակավին Կարս քաղաք–ամրոցի գրավման տարելիցի նախօրեին՝ 1878թ. նոյեմբերի 1-ին ռուսական կայսեր բարձրագույն հրամանագրով պաշտոնապես կազմավորվեց Կարսի մարզը, իսկ նոյեմբերի 6–ին՝ Կարսի ամրոցի գրավման տարելիցի օրը հիմնվեց մարզային կառավարչություն՝ զինվորական նահանգապետի գլխավորությամբ, որով «հայ ինքնաւարութեան յոյսերը յօդս ցնդեցան»²: Այս առթիվ Օ. ճգնավորյանը գրում է. «Արդարեւ, ռուսական քաղաքականութեան հետ խոտոր էր հայոց ձգտումները. ինքը (նկատի ունի Ցարական Ռուսաստանը – Կ. Յ.) ծրագրած էր Արեւմտեան Հայաստանը գրաւել առանց հայու եւ երբեք չէր կրցած հանդուրժել, որ իր սահմաններուն կից Հայաստան մը կազմուիլով՝ փորձանք դառնայ իր գլխուն: Օր

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 314, գ. 32, գ. 8, թ. 2, ֆ. 420, գ. 81, գ. 214, թ. 1:
² Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատ., Երևան, «Աղանա» հրատ., 1990, էջ 47:

մը իր հպատակ հայերն ալ կրնային միանալ այդ նորաստեղծ պետութեանը: Ռուսաստանի շահը կը թելադրեր ամէն գնով զսպել ըմբոստ հայերը»¹: Արդարև, Ռուսաստանը խուսափում էր հանձին Արևատյան Հայաստանի՝ նոր Բուլղարիայի ծնունդից:

Ռուսաստանին միացվելուց հետո ռազմաքաղաքական, ժողովրդագրական և այլ նկատառումներով մարզում քաղաքացիական կառավարում չնոցվեց: Փոխարենը, ստեղծվեց ռազմավարչական մի համակարգ, որի կառավարումն իրականացվում էր Կովկասի ռազմալեռնային վարչության կողմից: Այդ համակարգը հիմնվել էր 1858թ. ապրիլի 1-ին կայսեր բարձրագույն իրամանագրով՝ Կովկասի լեռնային ժողովուրդներին կառավարելու նպատակով: 1882թ. հունվարի 1-ին, Կովկասի փոխարքայության վերացման հետևանքով, Կովկասի ռազմալեռնային վարչությունը վերակառուցվեց Կովկասի Երկրամասի ռազմաժողովրդագրական վարչության:

Կարսի մարզում հիմնվեց ուժեղ ռազմավարչական համակարգ՝ զինվորական նահանգապետի գլխավորությամբ: Վերջինս նաև մարզում տեղակայված զորքերի իրամանատարն էր: Ի տարբերություն Անդրկովկասի քաղաքացիական կառավարման շրջանների՝ ռազմավարչական շրջաններն անմիջականորեն ենթարկվում էին ռազմական և ֆինանսների նախարարություններին: Բայց նրա կառավարման որոշ մարմիններ ենթարկվում էին Երևանի նահանգի համապատասխան վարչություններին: Տեղում բացակայում էին քաղաքացիական կառավարման մի շարք կառույցներ, այդ թվում՝ գյուղացիական գործերի ատյանը: Մարզի տարածքը Ռուսաստանին միացնելու առաջին մեկ-երկու տարում արմատավորվեցին ռուսական կայսրության օրենքներն ու դատական համակարգը՝ առանձին դեպքերում հաշվի առնելով տեղական սովորույթները²:

1883թ. հունիսի 27-ի վարչական բաժանումով մարզի տարածքը վերածնվում է չորս օկրուգի՝ Կարսի (6530 քառ. կմ.), Կաղզվանի (3635 քառ. կմ.), Արդահանի (5486 քառ. կմ.), Օլթիի (2995 քառ. կմ.)³ և 14 տեղամասերի կամ ոստիկանական շրջանի: Տեղամասերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ. Կարսի օկրուգում հինգ տեղամաս՝ Կարսի, Շորագյալի, Զարիշատի, Սողանլուղի և Աղբաբայի (ներկայիս Ամասիայի շրջանը – Կ. Յ.), Կաղզվանի օկրուգում՝ Երեք՝ Կաղզվանի, Նախիջևանի և Խորասանի, Արդահանի օկրուգում՝ չորս՝ Արդահանի, Գյոլի, Չլդրի, Փողխովի, Օլթիի օկրուգում՝ Երկու՝ Օլթիի և Թավուսքյարի:

¹ ՀԱԱ, ֆ. 420, գ. 16, գ. 8, թ. 21:

² Տե՛ս Հայոց պատմություն, հասող III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գիրք I (XVII դարի երկրորդ կես - XIX դարի վերջ), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2010, էջ 589-590:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, գ. 32, գ. 8, թ. 2-3, նաև նույն տեղում, թ. 19:

Կարսի մարզի ամբողջ հողատարածքը ճանաչվում է պետական սեփականություն, իսկ այնտեղ ապրող գյուղացիները՝ պետական գյուղացիներ: Մարզը ագրարային ծայրամաս էր, հետևաբար բնակչության հիմնական արտադրող զանգվածը՝ գյուղացիներունը: 1897թ. ընդհանուր մարդահամարի տվյալներով մարզի 290.654 բնակչությունից 243.857 մարդ կամ ամբողջ բնակչության 83, 9 %-ը գյուղացիներ էին: Գյուղացիական կարգախմբի մեջ էին մտնում նաև քաղաքային բնակչության մի մասը, որը զբաղվում էր գյուղատնտեսական արտադրությամբ և իր սոցիալական դիրքով ու զբաղմունքով գրեթե չէր տարբերվում գյուղական բնակչությունից: Կարս քաղաքն ուներ 4100 դեսյատին մշակելի հող: Մարզի բնակչության աճին գուգընթաց աճում էր նաև գյուղացիության քանակը¹:

Կարսի մարզը արևմուտքից և հարավից սահմանակից էր Օսմանյան կայսրության Երզրումի վիլայեթին, արևելքից ու հարավ-արևելքից՝ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի, Էջմիածնի և Սուրբալուի գավառներին, հյուսիսից՝ Թիֆլիսի, հյուսիս-արևմուտքից՝ Քութայիսի նահանգներին և Բաքումի մարզին: Բնական սահմաններն էին՝ հյուսիսում Փոցխով գետը, արևելքում՝ Ախուրյան գետը (Արփաչայ), հարավից ու արևմուտքից՝ Յայկական պար և Սողանլուդի լեռնաշղթաները:

Կարսի մարզը, շնորհիվ ռազմավարական նշանակության և սահմանային դիրքի, լավագույն ճանապարհներով կապված էր Ալեքսանդրապոլ, Ախալցխա և Երզրում քաղաքների հետ, իսկ Կարս քաղաքը երկաթուղով միացած էր Թիֆլիսի հետ:

Մարզի տարածքի միացումը Ռուսաստանին նպաստեց արտադրողական ուժերի զարգացմանը: Զգալի չափով աճեց բնակչությունը: Եթե 1877թ. սկզբին մարզում կար մոտ 142 հազար բնակիչ², ապա 1882թ. նրանց թիվը կազմում էր 162.979³, 1886թ.՝ 174.044⁴, 1890թ.՝ 191.315⁵, 1892թ.՝ 200.882⁶, 1897թ.՝ 290.654⁷, 1910թ.՝ 372.672⁸, 1914թ.՝ 391.213 մարդ⁹: 1915թ. Կարսի մարզի բնակչության թիվը հասավ 404.405 մարդու¹⁰, որից 23.000-ը կազմում էր Կարսի կայազորը: Աճեց նաև քաղաքային բնակչությունը: 1886թ. այն կազմում էր 8825 մարդ, իսկ 1914թ.՝ 48.602

¹ Տե՛ս Հակոբյան Ա., Կարսի մարզ. գյուղացիության պատմության ուրվագծեր. 1878–1917 թթ., Երևան, 2000, էջ 24–25:

² Տե՛ս Մալխասյան Ա., Կարսի մարզի բնակչությունը Ռուսական կայսրությանը միացվելու նախօրյակին (1829–1877թթ.), «Պատմություն և մշակույթ (հայագիտական հանդես)», Երևան, 2011, թիւ Բ., էջ 194:

³ Տե՛ս Կիրակոսյան Գ., Արևելյան Յայսատանի բնակչության սոցիալական կառուցվածքը XIX դարի 80–90-ական թվականներին, Երևան, 2010, էջ 53:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 53, 64:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 274, գ. 1, գ. 9, հն. I, թ. 3:

⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 314, գ. 32, գ. 8, թ. 2, տե՛ս նաև նույն տեղում, թ. 18:

⁷ Տե՛ս Կիրակոսյան Գ., նշվ. աշխ., էջ 53, 64, տե՛ս նաև Ասոյան Լ., Կարսի մարզի բնակչությունն ըստ 1897 թ. համառուսաստանյան մարդահամարի, «Դայոց պատմության հարցեր», հատ. 3, Երևան, ԳԱԱ Պի., 2002, էջ 80:

⁸ Տե՛ս Պոլոսյան Ա., Կարսկա օblուստ ու համար Հայաստանում, Երևան, 1983, ստր. 127:

⁹ Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 25:

¹⁰ Տե՛ս Պողոսյան Ա., Կարսի մարզ, Յայկական Սովետական Հանրագիտարան, հատ. 5, Երևան, 1979, էջ 346:

մարդ¹, որից Կարս քաղաքի բնակչությունը 1886թ. 3939 բնակչից 1892թ. հասնում է 10.474-ի², 1897թ.՝ 20.891-ի³, իսկ 1908թ.՝ 18.397-ի⁴:

Մարզի բնակչության ազգային կազմը խայտաբղետ էր: Այնտեղ ապրում էին 20-ից ավելի ազգերի ու ազգությունների ներկայացուցիչներ: Տիրապետող և բնիկ տարրը հայերն էին: Ուստական տիրապետության սկզբնական շրջանում պաշտոնական հրահանգներով թույլատրվեց, որպեսզի Կարսի մարզում սահմանափակ քանակությամբ՝ 4–6 հազար ծուխ հայեր բնակվեն⁵, իսկ ընդհանրապես՝ մարզում հայերի բնակեցումը համարվում էր անցանկալի: Իշխան Սվյատոպոլկ-Միրսկին՝ ցարին ուղղված գեկուցագրում նշում էր, որ չարժե կրկնել 1829թ. սխալները՝ նկատի ունենալով հայերի բնակեցումը Ախալքալաքի ու Ախալցխայի շրջաններում⁶: Իսկ գեներալ Լազարևը երգրումի բանակի թուրք հրամանատար Դուրտ Խսմայիլ փաշային գրած նամակով խնդրում էր, որ վերջինս. «միջոցներ ձեռք առնե իր կողմէն պաշտպանելու քրիստոնեաները, որ անոնք չստիպուին գաղթելու»⁷: Միաժամանակ Լազարևը հետևյալ հրահանգը հղեց Կարսի մարզի գեներալ-նահանգապետ Դուխովսկովին. «Զեզ ալ կը յայտնեն, թէ հրամայել են Խորասանի եւ Յասան Գալիի կառավարիչներուն, որպեսզի չքողուն որ տաճկաց Երկրներէն դէպի մեր սահմանները գաղթականութիւն տեղի ունենայ: Եթէ ինքնազլուխ անցնելու ըլլան, հրաման տրուած է՝ բռնի ետ վերադարձնել, իսկ եթէ հակառակ ամէն բանի նորէն աշխատին անցնիլ, այն ատեն պարտաւոր են ձերբակալել եւ յանձնել տաճկաց կառավարութեան, որ զանոնք տանի իրենց տեղերը»⁸: Ցարական մեկ այլ պաշտոնյա, անդրադառնալով Կարսի մարզի վերաբնակեցման հարցին, նշել է. «Կարսի շրջանից գաղթած թուրքերի հողերը տալ միայն ռուս աղանդավորներին և քրդերին: Ոչ մի գիւղ չի տրուելու հայերին: Ես այնպես եմ ամրապնդելու Կարսի շրջանը, որ թուրքահայերի ու ռուսահայերի հարաբերութիւնը խսպառ չեղոքացնեմ»⁹: Այս ամենը վկայում է ցարական կառավարության՝ Կարսի մարզը ռուս աղանդավորներով (մալականներով) վերաբնակեցնելու քաղաքականության նախին:

Չնայած ցարական պաշտոնյաների հարուցած խոչընդոտներին, մարզի դաշտերում, լեռնալանջերին ու հովիտներում ծգտում էին հաստատվել թե՛ արևելահայերը, և թե՛ արևմտահայերը: Ծնորիկվ արևմտահայ գաղթականների և

¹ Տե՛ս Յակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 25:

² Տե՛ս ՅԱԱ, ֆ. 314, ց. 32, թ. 8, թ. 5, տե՛ս նաև նույն տեղում, թ. 22:

³ Տե՛ս Մելիք-Յուզյան Յեր., Զորս տարի Յայսատանի բանվորական շարժման պատմության (1903-1907), Երևան, 1924, էջ 27, տե՛ս նաև Տյան Բ., Политика самодержавия России в закавказье XIX-XX нач. вв., часть VI. (1900-1915), Ереван, 2010, стр. 5.

⁴ Տե՛ս Մելիք-Յուզյան Յեր., նշվ. աշխ., էջ 27:

⁵ Տե՛ս Յակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 27:

⁶ Տե՛ս Պօղօսյան Ա., Կարսկա գույքը ու ապահովությունը Հայոց պատմության մեջ, 1948, էջ 129.

⁷ Սերոբեան Ա., Սեր պայքարը հայ ազատագրութեան ուղիղով (Վերլուծումներ Յայկական հարցին շուրջ), Գահիր, 1948, էջ 202:

⁸ Նույն տեղում, էջ 203:

⁹ ՅԱԱ, ֆ. 1456, ց. 2, թ. 9, թ. 28:

բնական աճի՝ հայերի թիվը Կարսի մարզում գնալով աճեց՝ 1878թ. 19.446 մարդուց¹ (ըստ Մ. Մալխասյանի հաշվարկների՝ 22.700²) 1890թ. հասնելով 41.791-ի³, 1897թ.՝ 73.406-ի⁴, 1906թ.՝ 93.918-ի, 1909թ.՝ 95.199-ի⁵, 1910թ.՝ 101.197-ի⁶: Իսկ 1914թ. մարզում հայերի թիվը կազմում էր 114.938 շունչ⁷ (ըստ այլ տվյալների՝ 123.000⁸) կամ կամ մարզի ընդհանուր ազգաբնակչության 30.7 %-ը: 1913թ. տվյալներով՝ Կարսի մարզում կար 282 գյուղ, որից հայաբնակ էր 85-ը:

Հայերից հետո իրենց թվաքանակով և մարզի սոցիալ-տնտեսական կյանքում խաղացած դերով աչքի էին ընկնում թուրքերը (1890թ.՝ 44.964⁹, 1909թ.՝ 64.470¹⁰), քրդերը (1890թ.՝ 29.176¹¹, 1909թ.՝ 46.456¹²), ռուսները (1890թ.՝ 11.706¹³, 1897թ.՝ 14.244¹⁴, 1909թ.՝ 16.081¹⁵, 1913թ.՝ 16.628¹⁶), հույները (1890թ.՝ 25.578¹⁷, 1909թ.՝ 45.000¹⁸, 1913թ.՝ 48.610¹⁹), թուրքմենները (1890թ.՝ 10.314²⁰, 1909թ.՝ 16.245²¹, 1913թ.՝ 16.557²²), ղարափափախները (1890թ.՝ 26.217²³, 1909թ.՝ 40.417²⁴, 1913թ.՝ 43.272²⁵), լեզգիները, պարսիկները, գերմանացիները, էստոնացիները, հրեաները (բոլոր միասին 1892թ. կազմում էին մարզի բնակչության 5 %-ը (10.952 մարդ)²⁶: Բոլորը եկվորներ էին, բայց, եթե թուրքերն ու քրդերը Կարսի մարզում հաստատվել էին թուրքական նվաճումներին զուգընթաց՝ XVI–XVII դարերից, ապա մյուսները՝ մարզը Ռուսաստանին միացվելու նախօրյակին:

Մարզի մահմեդական բնակչության մեջ թվաքանակով մեծարիկ էին թուրքերն ու քրդերը, որոնք՝ 1892թ. համապատասխանաբար կազմում էին 48.192 և 30.120²⁷, 1910թ.՝ 67.137 և 52.400²⁸, իսկ 1914թ.՝ 79.191 և 60.439 շունչ²⁹: Ինչպես վկայուն են արխիվային վավերագրերը, մարզում զտարյուն էրնիկ ծագումով թուրքերը շատ քիչ

¹ Տե՛ս Յակոբյան Ա., Աշվ. աշխ., էջ 27:

²Տես Սախնակյան Ա., Ծառ հոգումը, «Պատմություն և մշակույթ (հայագիտական համեստ)», Երևան, 2011, թիվ Բ., էջ 193:

³ St'u RUU, §. 274, g. 1, q. 9, hun. I, p. 3:

⁴Տե՛ս Ասոյան Լ., նշվ. հոդվածը, «Քայլց պատմության հարցեր», հատ. 3, էջ 80:

⁵ Ст.у Обзорь Карской области за 1909 годъ (Приложение къ засподданьшему отчету), Карсъ, 1910, стр. 3.

⁶ Ст'ю Погосян А., Карская область в составе России, стр. 126.

⁷ Տե՛ս Յակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 27:

⁸ Տե՛ս Հայոց պատմություն, խմբ. Յ. Ք. Սիմոնյանի, Երևան, ԵՊՐ հրատ., 2012, էջ 346:

⁹ Տե՛ս ՀԱՅԱ, §. 274, ց. 1, գ. 9, հան. I, թ. 3, նաև նույն տեղում, հան. II, թ. 112:

¹¹ СНУ РИИ № 274, л. 1, л. 9, бир. 1, л. 2, фунд. 5945.

¹¹ ՏԵ՛Ս ՀԱՅԱ, ֆ. 274, գ. 1, զ. 9, հԽ. I, թ. 3, ճան նույն տեղում, հԽ. II, թ. 112:

¹³ Ст'и Обзоръ Карской области за 1909 годъ, стр. 3.

¹⁴ Տե՛ս ՀԱՅԱ, §. 274, ց. 1, գ. 9, հն. I, թ. 3:

¹⁴ ՏԵ՛Ս ԿԱՊԵՅԱՆ Լ., Աշվ. հոդվածը, «Հայոց պատմության հարցեր», հատ. 3, էջ 80:

¹⁶ Ст. Обзорь Карской области за 1909 годъ, стр. 3.

¹⁷ ՏԵՐ Ա-ՆԻԽՈՅԱՍ Ա., Սոցիալ-Առանձակական Կոմիտասի պահպանության վեհական շարժությունը 1878-1920 թթ., Երևան, 1961, էջ 11.

За 1901, ф. 274, г. 1, д. 9, п. 1, п. 3, тип и шт. Всеподданнейший отчет о состоянии Карской области за 1890 годъ, Карс, 1891, стр. 3.

¹⁸ Ст'я Обзор

¹⁹ Ст'и **Պողոսյան Ա.**, Սովորութեան կամ հարաբե

²⁰ Տես ԱՀԿ, §. 274, գ. 1, զ. 9, հնլ. 1, թ. 3, տե՛ս նաև Վсеподданнейший отчет о состоянии Карацкой области

²¹ Ст. 1 Обзоры Карской области за 1909 год, стр. 3.

²²Տե՛ս Պողոսյան Ա., Սոցիալ-տնտեսական հարաբե

²³ Ст'я РЧС, ф. 274, г. 1, к. 9, лн. 1, р. 3, тп'я бшъ Всеподданнейший отчет о состоянии Карской области

²⁴ Ст. 1 Обзор Красной области за 1909 год, стр. 3.

²⁵ Տե՛ս Պողոսյան Ա., Սոցիալ-տնտեսական հարաբ

²⁶ Տե՛ս ՀԱՅԱ, ֆ. 314, ց. 32, զ. 8, թ. 2, տե՛ս նաև նույն տեղում, թ. 18:

²⁷ Տեղական տեղում:

²⁸ Ст'ю Погосян А., Ка

²⁹ Տե՛ս Քակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 28:

էին: Օրինակ, հայտնի է, որ Օլքիի օկրուգի հայկական մի շարք գյուղերի բնակչությունը մարզի՝ Ռուսաստանին միանալուց ընդամենը 30 տարի առաջ էին ընդունել մահմեդականություն¹: Ինչպես Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, Կարսի մարզում նույնպես բուն հայկական շատ տեղանուններ, հատկապես՝ գյուղերի անուններ աղավաղվել ու հնչյունափոխվել էին կամ էլ փոխարինվել արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, քրդերեն համարժեքներով: Մարզի տարածքում կարելի էր հանդիպել օտարալեզու արմատներով տասնյակ գյուղերի և բնակավայրերի անունների: Բնավ զարմանալի չէ, որ Ռուսաստանին միացվելուց հետո այդ գյուղերի ոչ հայկական անունները մեխանիկորեն ամրագրվում են ցարական պաշտոնյաների գրությունների մեջ, տեղ գտնում պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերում և ժողովածուներում: Այդպիսի աղավաղուններ հատկապես նկատվում էին Արդահանի և Օլքիի օկրուգներում, ուր բնակվում էր մարզի թուրք բնակչության մեծամասնությունը²:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսի մարզի մահմեդական ազգաբնակչությունը սկսեց զանգվածաբար լքել մարզի տարածքն ու վերաբնակվել Օսմանյան կայսրության՝ Ռուսաստանին սահմանամերձ Ալաշկերտի ու Բասենի շրջաններում: Այդ արտագաղթին նպաստեց 1879թ. փետրվարի 8-ին Կոստանդնուպոլսում կնքված ռուս-թուրքական համաձայնագիրը, որի 27-րդ հոդվածն ազդարարում էր, որ եթե Ռուսաստանին անցած վայրերի (Կարսի մարզի և Բաթումի գավառի) բնակիչները ցանկանան բնակվել այդ տարածքներից դուրս, կարող են ազատ գնալ՝ վաճառելով անշարժ գույքը: Դրա համար նրանց տրվում էր եռամյա ժամկետ՝ սկսած համաձայնության վավերացման օրվանից³: Այս համաձայնությունը ձեռնտու էր ինչպես մարզի մահմեդական բնակչությանը, որը, զրկվելով նախկինում ունեցած արտոնյալ վիճակից, չէր ցանկանում ենթարկվել ռուսական իշխանություններին, այնպես էլ՝ ռուսական իշխանություններին, որոնք ցանկանում էին մարզը վերաբնակեցնել հուսալի ու հավատարիմ բնակչությամբ, ինչպիսիք համարվում էին ռուսները, մալականներն ու հույնները:

Ելնելով վերոնշյալ քաղաքականությունից, 1879թ. հունվարի 28-ին Կարսի մարզի նահանգապետը մարզի օկրուգային պետերին հրահանգեց խրախուսել մահմեդականների տեղափոխությունը: Նրանց անշարժ գույքի գննան համար կառավարությունը հատկացրեց 500.000 ռուբլի, իսկ յուրաքանչյուր տեղափոխվող ընտանիքի ղեկավար պետք է տար ստացական այն մասին, որ այլևս մարզ վերադառնալու ցանկություն չի հայտնի: Միաժամանակ, տեղափոխվող

¹ Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև **Ռուսեն**, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 142:

² Տե՛ս **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 28:

³ Տե՛ս **Պոլոսյան Ա.**, Կարսկա օջախ Ռուսական կայսրության գ., նշվ. աշխ., էջ 51:

մահմեղականները կարող էին իրենց անշարժ գույքը վաճառել միայն մարզային կառավարման ներկայացուցչի իմացությամբ¹:

Թեև տեղափոխման համար սահմանվել էր եռամյա ժամկետ, բայց ռուսական կառավարությունը, ամեն կերպ արագացնում էր այդ գործընթացը: Մինչև 1881թ. օգոստոսի 1-ը 82.760 մահմեղական լքեց մարզի տարածքն ու տեղափոխվեց Օսմանյան կայսրություն²: Դրանից հետո Կարսի մարզում նրանց թիվը կազմեց ընդհանուր բնակչության 37 %-ը, բայց, առանձին շրջաններում, նրանք մեծամասնություն էին կազմում, ինչպես Օլթիում (43,1 %), Թավուսքյառում (89 %), Փոցխովում (91,4 %)³ և Արդահանի շրջանում⁴: Յարկ ենք համարում նշել, որ 1879թ. Պարսկաստան հեռացած դարափակախների գգալի մասը (մոտ 15.000 մարդ) 1880-ական թթ. կրկին վերադարձավ Կարսի մարզ: Միևնույն ժամանակ, մարզում բնակություն հաստատեց մոտ 10.000 թուրքմեն⁵:

Ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսական իշխանությունների խրախուսանքով Կարսի մարզում սկսեցին վերաբնակվել Անդրկովկասից և Ռուսաստանի կենտրոնական նահանգներից ներգաղթած ռուս վերաբնակիչներ, հիմնականում՝ մալականներ: Ցարական կառավարությունը, առաջնորդվելով իր գաղութային քաղաքականությամբ, ձգտում էր մարզը բնակեցնել հատկապես ռուսներով: 1879թ. փետրվարի 21-ին իշխան Սվյատոպոլկ-Միրսկին Կարսի գեներալ-նահանգապետ Ֆրանկլինին ուղղված գաղտնի հաղորդագրության մեջ գրում էր. «...մեր գլխավոր նպատակը պետք է լինի կարելվույն չափ մեծ թվով ռուսներ բնակեցնել Կարսի մարզում»⁶: Ռուս ներգաղթողների մեծամասնությունը հիմնավորվում էին Կարսի օկրուգում: Նրանց մեջ գերակշռում էին մալականներն ու դուխոբորները, որոնք Կարսի մարզ էին փոխադրվել Սարատովի, Տամբովի և Եկատերինոսլավի նահանգներից և մարզի մնացած բնակչության համեմատ ունեին կյանքի առավել բարձր պայմաններ: Դա նպաստում էր նրանց թվաքանակի արագ աճին: Կարծ ժամանակաշրջանում ռուս վերաբնակիչների թիվը գրեթե կրկնապատկվեց՝ 1882թ. 7957 շնչից 1896թ. հասնելով 14.244-ի⁷: XX դարի սկզբին ցարիզմի վերաբնակեցման վերաբնակեցման նոր քաղաքականության հետևանքով մարզի ռուս բնակչության թվաքանակը մեծացավ՝ 1909թ. հասնելով 16.081-ի⁸, իսկ 1910թ.՝ 18.000-ի⁹:

¹ Տե՛ս **Պոգոսյան Ա.**, Կարսկայ օլուստը Ռուսական կայսրությունում, 1877-1917 թվականների պատմությունը, Երևան, 2011, թիվ 1, էջ 121-122.

² Տե՛ս նույն տեղում, էջ 123:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 125-126:

⁴ Տե՛ս Ոուրեն, նշվ. աշխ., Ա. հատ., էջ 141, տե՛ս նաև Յակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 28:

⁵ Տե՛ս Մալխասյան Մ., նշվ. հոդվածը, «Պատմություն և մշակույթ (հայագիտական հանդես)», Երևան, 2011, թիվ Բ., էջ 192:

⁶ **Պոգոսյան Ա.**, Կարսկայ օլուստը Ռուսական կայսրությունում, 1877-1917 թվականների պատմությունը, Երևան, 2011, թիվ 1, էջ 187:

⁷ Տե՛ս Յայոց պատմություն, հատոր III, գիրք I, էջ 590-591:

⁸ Տե՛ս Օբզօր Կարսկայ օլուստի 1909 թվականի պատմությունը, հատոր III, գիրք I, էջ 3:

⁹ Տե՛ս **Պոգոսյան Ա.**, Կարսկայ օլուստը Ռուսական կայսրությունում, 1877-1917 թվականների պատմությունը, Երևան, 2011, թիվ 1, էջ 127.

Այսպիսով, Ռուսաստանի կառավարությունը, ելնելով իր քաղաքական շահերից, փորձեց մարզն ազատել ոչ ցանկալի բնակչությունից (գլխավորապես՝ մահմեդականներից) և ստեղծել իր համար հուսալի սոցիալական ու ազգային հենարան: Դա նրան հնարավորություն կտար վարելու մեջապետական ազգայնական քաղաքականություն:

Կարսի մարզում զգալի թիվ էին կազմում նաև «ժամանակավոր վերաբնակվողները»: XIX դարի վերջին քառորդում հող ձեռք բերելու և բնակություն հաստատելու նպատակով այնտեղ էին գաղթել մեծ թվով հայեր՝ թե կովկասյան նահանգներից, և թե' Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերից¹: Սակայն, ցարական ցարական իշխանություններն ամեն կերա խոչընդոտում էին արևմտահայերի վերաբնակեցմանը: Ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո, երբ հարց ծագեց Ալաշկերտից փախած գաղթականներին տեղավորելու մասին, Կարսի գեներալ-նահանգապետ Ֆրանկլինի առաջարկությամբ և իշխան Սվյատոպոլկ Միրսկու աջակցությամբ որոշվեց «ռուսահպատակ հայերին տաճկահպատակ հայերից բաժանելու նպատակով չընակեցնել նոր գաղթականներին Կարսի շրջանում և, առհասարակ, այս շրջաններում հող չտալ հայերին»²: Արևմտահայության հանդեպ ցարական իշխանությունների այդ մոտեցումը պարզորոշ արտահայտվում էր նաև Երգրումի գեներալ-նահանգապետի՝ համայն Ռուսիո ցար Ալեքսանդր II-ին ուղղված 1879թ. սեպտեմբերի 7-ի գեկուցման մեջ, ուր, մասնավորապես, նշվում էր, որ ինքն ամեն կերա աշխատել է արգելել քրիստոնյաների ինքնակամ տեղափոխումն այն տարածքներից, որոնք Բեռլինի պայմանագրով վերադարձվել է Թուրքիային³:

Հակառակ ռուսական իշխանությունների կողմից իրականացված քաղաքականությանը՝ Ալաշկերտից, Բայազետից, Կարինից և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից Կարսի մարզ էին ներգաղթում մեծ թվով արևմտահայեր⁴: Սկզբնական շրջանում դա հնարավոր էր ազատ հողային տարածությունների առկայության շնորհիվ: Ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսի մարզ ներգաղթած գյուղական բնակչությունն, ընդհուպ մինչև 1886թ. ծխային ցուցակագրությունը, հիմնականում հողաբաժին ստացավ, իսկ դրանից հետո ներգաղթածներին, բացառությամբ՝ ռուս վերաբնակիչների և առանձին դեպքերի, որպես կանոն, հողաբաժին չէր տրվում: Հետևապես, հայ բնակչության հոսքը Կարսի մարզ միշտ չէ, որ իրավական-պաշտոնական գրանցում էր ստանում⁵:

¹ Տե՛ս Հայոց պատմություն, հատոր III, գիրք I, էջ 591:

² «Դրոշակ», օրգան Յ. Յ. Ղաշճակցութեան, մընել, սեպտեմբեր, 1902, թիւ 9, տես նաև Գեղամեանց Ե., Ցիշողութիւններ, «Լումայ», գրական, քաղաքական, պատմական եւ հանրային ամսագիր, Թիֆլիս, ապրիլ, 1906, թիւ 4, էջ 25:

³ Տե՛ս Պոլոսյան Ա., Կարսկա օblուստ և ուժությունը Ռուսական կայսրությունում, 1878-1917 թվականների պատմություն, Երևան, 1997, էջ 123-124.

⁴ Տե՛ս Հայոց պատմություն, խմբ. Յո. Սիմոնյանի, էջ 346:

⁵ Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 29-30:

XIX դարի 90-ական թթ. կեսերին արդուլիամիոյան ջարդերի հետևանքով արևմտահայ փախստականների ներհոսքը դեպի Անդրկովկաս զանգվածային չափերի հասավ: Զարդերից մազապուրծ արևմտահայերի գերակշիռ մասը տեղափոխվեց Արևելյան Հայաստան, առաջին հերթին՝ Կարսի մարզ: Անգամ ամենամեղմ տվյալներով 1894–1896 թվականներին ռուսական կայսրության տարածք էին տեղափոխվել 80.000 արևմտահայ գաղթականներ, որից 20.240-ը հաստատվել էին Կարսի մարզում: Նրանց վիճակը մոայլ գույներով է պատկերված մամուլի և գրականության էջերում: Կովկաս տեղափոխված արևմտահայ գաղթականները գուրկ էին գոյության միջոցներից, հողաբաժին չէին ստանում և նրանց անվանում էին «ժամանակավոր վերաբնակիչներ»: 1901թ. միայն Կարս քաղաքում հաշվառված էր այդպիսի 1340 ընտանիք¹ կամ 10.082 անձ²: Միևնույն ժամանակ Կաղզվանում կար 5594 արևմտահայ փախստական³:

Չնայած արևմտահայ գաղթականների՝ հող ստանալու բազմաթիվ դիմում—աղերսագրերին, կառավարությունը նրանց հող չէր հատկացնում, իսկ Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինը, իշխանության բարձրագույն մարմինների գիտությամբ, փորձեց նրանց հետ վերադարձնել նրանց բնակության նախկին վայրերը: 1901թ. նոյեմբերին հրապարակվեց կառավարչապետի շրջաբերականը, որտեղ մասնավորապես նշված էր՝ «1. Այն բոլոր փախստականներին, որոնք չեն ցանկանում գաղթել արտասահման, թոյլ է տրում մնալ իրենց այժմեան բնակած տեղում եւ գրուել գիւղական համայնքների վրայ, եթէ այդ բանին կը համաձայնին վերջինները... 2. Թէ Կովկասեան երկրի սահմաններում մնացող եւ թէ ներքին նահանգները գնալ ցանկացող հայ փախստականները պարտաւոր են ռուսաց հպատակութիւն ընդունիլ, իսկ ռուսաց հպատակութիւն ընդունիլ չցանկացողները պարտաւոր են անյապաղ հառանալ ռուսաց կայսրութեան սահմաններից, 3. Հայ փախստականները 1902 թուից սկսած ենթակայ են զինուորագրութեան, 4. Եթէ նրանք կը վերաբնակուեն արդէն եղած գիւղերում՝ իրաւունք չէ տրում հողաբաժին ստանալ, 5. Քաղաքներից դուրս անշարժ գոյքեր ձեռք բերելու իրաւունքը Կովկասում գաղթական հայերին թոյլ է տրում ոչ վաղ, քան ռուսաց հպատակութիւն ընդունելուց քսան տարի յետոյ»⁴: Այդ որոշումը տարածվում էր «այն փախստական հայերի վրայ, որոնք եկել են Կովկասի սահմանները մինչեւ 1901 թուի փետրուարի 1-ը, իսկ

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 30:

² Տե՛ս Անանուն Դ., նշվ. աշխ., հատ. երրորդ, էջ 13:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Ակնումի Էր., Կովկասեան վերքեր, I հատ., Ժըմեւ, 1903, էջ 287-288, նա՛և Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը Հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրտ, 1957, էջ 115-116, տես նաև ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 12, թ. 1:

վերոյիշեալ ժամանակամիջոցից յետոյ Եկածները դուրս են ուղարկւելու կայսրութիւնից¹:

1903թ. ռուսական իշխանությունները Կարսի մարզի հայ գաղթականներից պահանջում էին վճարել պետական հարկերն ու Ենթարկվել պարտադիր զինվորական ծառայության, իսկ չենթարկվողներին՝ բռնի կերպով վտարում էին Օսմանյան կայսրության իրենց նախկին բնակավայրերը²: Յակառակ իշխանությունների այդ պահանջի՝ հայ գաղթականությունը ոչ ռուսական հպատակություն ընդունեց, ոչ էլ հեռացավ ռուսական կայսրության սահմաններից՝ հատկապես՝ Կարսի մարզից: Այդ ամենում իր մեծ դերակատարությունն ունեցավ հատկապես Յայ Յեղափոխական Դաշնակցությունը, որը դիմեց ամեն միջոցի՝ կանխելու համար հայ գաղթականների կողմից ռուսահպատակության ընդունումը³: Այդ հարցը ժամանակին մեծ արձագանք է գտել ինչպես կովկասահայ մամուլում, այնպես էլ կովկասահայության մեջ՝ ընդհանրապես:

Մեծ տառապանքների գնով Անդրկովկաս գաղթած արևմտահայությունը տարերայնորեն տարրալուծվում էր տեղի հայ բնակչության մեջ կամ խմբվելով քաղաքներում և գյուղերում՝ վերածվում էր էժան աշխատուժի՝ դառնալով տեղի բնակչության ամենաաղքատ խումբը: 1897թ. Կարսի մարզի «ժամանակավոր բնակիչների» թիվը կազմում էր՝ 22.619 մարդ, 1900թ.՝ 32.705, 1910թ.՝ 45.618⁴:

Այսպիսով, ցարական իշխանությունները Կարսի մարզի բնակեցման հարցում կիրառում էին ոչ հայանպաստ քաղաքականություն: Սակայն, այն XIX դարի վերջին, երբ՝ մի կողմից դուխաբորները սկսեցին գաղթել Ամերիկա, իսկ հույները՝ Թեսսալիա, իսկ մյուս կողմից, չնայած ցարական իշխանությունների հարուցած արգելքին, մարզում գնալով աճեց արևմտահայ գաղթականության թվաքանակը:

Անփոփելով Կարսի մարզի XIX դարի վերջին և XX դարի սկզբներին առկա ժողովրդագրական պատկերի նկարագրումը, հանգում ենք հետևյալ եզրակացության՝ 1. Մարզի՝ ռուսական կայսրության մաս դառնալուց հետո զգալիորեն աճեց մարզի բնակչությունը, հատկապես՝ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում: 2. Ռուսաստանին միացվելուց հետո մարզում տեղի ունեցավ ժողովրդագրական փափոխություն՝ մարզից հեռացավ թուրք-քրդական բնակչությունը և, դրան հակառակ, չնայած ռուսական իշխանությունների հարուցած խոչընդոտներին, ավելացավ հայ բնակչության թվաքանակը: 3. Ցարական իշխանությունների խրախուսմամբ 1878-1914թթ. Կարսի մարզում բնակություն

¹ Ակնումի Եր., Կովկասեան վերքեր, I հատ., էջ 288:

² Տե՛ս «Զայն հայրեննաց», ազգային, գրական և քաղաքական շաբաթաթեր, Բոստոն, 26-ը սեպտեմբերի, 1903, թիւ 225:

³ Սամրանասն տե՛ս «Դրոշակ», Ծոյնքեր, 1902, թիւ 11:

⁴ Տե՛ս Յակոբյան Ա., նշան., էջ 31:

հաստատեց մեծ թվով ռուս աղանդավորներ (մալականներ և դուխաբորներ) և հույներ, որոնց թիվն անշեղորեն աճում էր: 4. Մարզում գգալիորեն մեծ էր նաև գրանցում չստացած արևմտահայ գաղթականների թվաքանակը, որոնք կազմում էին մարզի բնակչության ամենաաղքատ մասը:

Կարապետ Հակոբյան

ПОЛИТИКО-АДМИНИСТРАТИВНЫЕ ИЗМЕНЕНИЯ И НАСЕЛЕНИЕ КАРССКОЙ ОБЛАСТИ В 1878-1914 ГГ.

После перехода территории Карской области под российское поддлесство, значительно увенчавшись население региона, произошли ряд административно-демографических изменений, в частности, из Карса выселилось курдское-турецко население. В противовес этому на территории области, несмотря на препятствия со стороны русских властей, значительно увеличивается количество армянского населения. С поощрения царских властей в 1878-1914 гг. в Карской области поселилось большое количество русских сектантов и греков, количество которых неуклонно увеличивалось. Также в Карской области было велико количество так называемых “временных переселенцев” – не получивших регистрацию армянских беженцев из Западной Армении, которые составляли самую бедную часть населения области.

Կարապետ Ակոպյան

ADMINISTRATIVE – POLITICAL CHANGES AND DEMOGRAPHIC PICTURE IN KARS PROVINCE DURING 1878-1914

After passing of the area of Kars province under Russian dominion the population of the province significantly increased, demographic changes occurred. Turk-Kurdish population left the province and as opposed to it, the number of Armenian population significantly increased, despite of barriers caused by Russian authorities.

From 1878 to 1914 a great number of Russian sectarians and Greeks settled in Kars by the encourage of Russian Empire authorities and their number steadily increased.

Karapet Hakobyan

Հեռ. 093-03-58-02 կամ 0223-3-58-02